



## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՎՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### **ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԸ 800,000 ՏՈՒԱՐԻ ԲԱՑԱՌԻԿ ԳՈՒՄԱՐ ՄԸ ԿԸ ՏՐԱՄԱԴՐԵ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՆ**

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան եւ Ազգային Վարչութիւնը այսու ուրախութեամբ կը յայտարարեն մեր ազնիւ ժողովուրդին, թէ նկատի ունենալով երկրի տնտեսական կացութիւնը եւ անոր հետեւանքով մեր վարժարաններուն դիմագրաւած դժուարութիւններն ու մարտահրաւերները, 800,000 (ութ հարիւր հազար) տոլարի մեծագումար յատկացում մը կը տրամադրուի Թեմիս Ազգային Վարժարաններուն: Այս յատկացումին առաջին բաժինը Ազգ. Վարժարաններուն փոխանցուեցաւ ամանորի նախօրեակին:

Ուրախ ենք յայտնելու, որ այս յատկացումը կարելի դարձաւ՝ շնորհիւ Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հովուապետական այցելութեան առիթով, ի պատիւ Վեհափառ Հայրապետին կազմակերպուած մեծարանքի ճաշկերոյթին արձանագրուած նուիրատուութեանց եկամուտին: Կ'ուզենք գոհունակութեամբ յայտարարել, թէ այս յատկացումին մէկ մասով, իբրեւ անձեռնմխելի գումար՝ Ազգ. Առաջնորդարանիս մօտ պիտի հաստատուի հիմնադրամ մը, որուն հասոյթը նմանապէս պիտի օգտագործուի ի նպաստ Ազգ. վարժարաններուն: Վստահ ենք, որ հիմնադրամը պիտի վայելէ մեր բարերարներուն գուրգուրանքը եւ պիտի աճի տարուէ տարի:

Այս առիթով, կ'ուզենք մեր ժողովուրդին սեփականութիւնը դարձնել, թէ հովուապետական այցելութեան օրերուն կազմակերպուած հանգանակային ձեռնարկները նիւթական զօրակցութիւն ապահովեցին նաեւ ի նպաստ Անթիլիասի Դպրեվանքին, Ազգ. Առաջնորդարանիս եւ մեր եկեղեցիներուն, յատկապէս Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարին, Սան Ֆրանսիսքոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Ֆրեզնոյի Ս. Երրորդութիւն եւ Լաս Վեկասի Ս. Կարապետ եկեղեցիներուն, որուն համար այսու անգամ մը եւս շնորհակալութիւն կը յայտնենք մեր ազնիւ բարերարներուն ու նուիրատուներուն:

**WESTERN PRELACY MAKES A RECORD ALLOCATION OF  
\$800,000 TO PRELACY SCHOOLS**

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and the Executive Council with great joy announce that the Western Prelacy has allocated a record amount of \$800,000 to Prelacy Schools. This allocation serves to alleviate financial concerns of our Schools brought on by global economic conditions. The first portion of this amount was distributed to Prelacy Schools prior to the New Year.

This allocation was made possible by generous donations received at the Pontifical Banquet in honor of His Holiness Catholicos Aram I during the Pontifical Visit of October 2011. We also announce that a fund for our Schools will be established at the Prelacy with a portion of the allocation. We are confident that this fund will grow year by year with the contributions of our faithful community.

We are pleased also that on the occasion of the Pontifical Visit of His Holiness, we were able to secure substantial support for the Catholicosate Seminary, our Prelacy, and our Churches, specifically Holy Cross Cathedral of Montebello, St. Gregory Church of San Francisco, Holy Trinity church of Fresno and St. Garabed Church of Las Vegas, for which we once again thank our sponsors and donors.

\*\*\*

### **ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ ԸՐԱԳԱԼՈՅՑԻ Ա. ՊԱՏԱՐԱԳԻ**

Հինգշաբթի, 5 Յունուարը Ա. Ծննդեան ճրագալոյցի օրն է:

Այս առիթով, Ա. Պատարագ պիտի մատուցուի մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ եւ Ա. Հաղորդութիւն պիտի տրուի հաւատացեալ ժողովուրդին:

Առաջնորդ Սրբազան Հայրը Ա. Պատարագ պիտի մատուցէ Սոնթեպելլոյի Ա. Խաչ Սայր Տաճարին մէջ եւ պիտի փոխանցէ օրուան պատգամը:

### **CHRISTMAS EVE DIVINE LITURGY SCHEDULE**

On Thursday, January 5<sup>th</sup>, Christmas Eve Divine Liturgy will be celebrated in all our Churches followed by the offering of Holy Communion.

The Prelate will celebrate Divine Liturgy and deliver the sermon at Holy Cross Cathedral in Montebello.

\*\*\*

### **ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ Ա. ԾՆՆԴԵԱՆ Ա. ՊԱՏԱՐԱԳԻ**

Ա. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնին առիթով, Ուրբաթ, 6 Յունուարին, Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ տեղի պիտի ունենայ

հանդիսաւոր Սուրբ Պատարագ, որուն աւարտին պիտի կատարուի աւանդական ջրօրհնէք:

Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ պիտի պատարագէ, իր պատգամը պիտի փոխանցէ եւ ջրօրհնէք պիտի կատարէ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազանը:

Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեան Ս. Պատարագ պիտի մատուցանէ եւ պիտի քարոզէ Էնսիւնյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ մէջ:

Նորթ Յոլիվուտի Յայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ Ս. Պատարագը պիտի մատուցուի բացառաբար առաւօտեան ժամը 10:00-ին: Պիտի պատարագէ, պիտի քարոզէ եւ ջրօրհնէք պիտի կատարէ շրջանի հոգեւոր հովիւ՝ Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան:

Քրետենթա Յովիտի Յայց. Առաք. եկեղեցւոյ Ս. Ծննդեան Ճրագաւոյցի Ս. Պատարագը պիտի մատուցուի Ազգ. Առաջնորդարանին մէջ, Յինգշաբթի, 5 Յունուարին, երեկոյեան ժամը 5-էն սկսեալ: Իսկ Ուրբաթ, 6 Յունուարին, Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնին առիթով, Ս. Պատարագ պիտի մատուցուի առաւօտեան ժամը 11-ին: Պիտի պատարագէ եւ պիտի քարոզէ շրջանի հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Ղեւոնդ Քիւնյ. Քիրագեան:

## **CHRISTMAS DIVINE LITURGY SCHEDULE**

On Friday, January 6<sup>th</sup>, the Glorious Birth and Theophany of our Lord Jesus Christ will be ceremoniously celebrated with Divine Liturgy and the blessing of water in all Prelacy Churches.

The Prelate will celebrate Divine Liturgy, deliver the sermon, and preside over the blessing of water at St. Mary's Church in Glendale.

H.E. Archbishop Yeprem Tabakian will conduct services at Holy Martyrs Church in Encino.

Very Rev. Fr. Muron Aznikian will conduct services at the North Hollywood parish, where the service will begin at 10:00 a.m.

Divine Liturgy at the Crescenta Valley parish will be celebrated at the Prelacy at 5:00 p.m. on Christmas Eve, and at 11:00 a.m. on Christmas Day.

\*\*\*

## **ՀՈԳԵՅԱՆԳԻՍՏ ՄԵՌԵԼՈՅ ՅԻՇԱՏԱԿԻՆ**

Շաբաթ, 7 Յունուարին, Ս. Ծննդեան Մեռելոցի տօնին առիթով, եւ համաձայն մեր եկեղեցւոյ աւանդութեանց, մեր հանգուցեալ հարազատներուն յիշատակին, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Յոլիվուտ Յիլզի Forest Lawn գերեզմանատան «Hall of Liberty»-ի եւ Կլենտէյլի Forest Lawn գերեզմանատան «Church of the Recessional» եկեղեցւոյ մէջ, առաւօտեան ժամը 10:00-ին, գլխաւորութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր եւ մասնակցութեամբ Թեմիս հոգեւոր հայրերուն:

## MEMORIAL DAY REQUIEM SERVICE AT FOREST LAWN

On the morning of Saturday, January 7<sup>th</sup>, Christmas memorial day services will be held at Forest Lawn Hollywood Hills "Hall of Liberty" and Forest Lawn Glendale "Church of the Reccessional", beginning at 10:00 a.m.

The Prelate will preside over services at the Hollywood Hills Forest Lawn, with the participation of clergy.

\*\*\*

## ԱՄԱՆՈՐԻ ԱՌԻԹՈՎ ՄՏԵՐՄԻԿ ԵՐԵԿՈՅԹ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՅԱՄԱՐ



Երեքշաբթի, 27  
Դեկտեմբերի երեկոյեան,  
Ազգային Առաջնորդարանի  
«Տիգրան եւ Չարուհի Տեր  
Ղազարեան» սրահը  
ժամադրավայրը եղաւ Ազգ.  
Առաջնորդարանի մեծ  
ընտանիքի անդամներու եւ  
ներկայացուցիչներու  
համար, որոնք իւր  
տարուան սեմին, հաճելի  
պահ մը բոլորեցին թեմիս  
բարեխնամ Առաջնորդ

Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ ժողովականութեան անդամներու հետ:

Երեկոն կազմակերպուած էր Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինին կողմէ, որ տարիներէ ի վեր գեղեցիկ աւանդութիւն մը հաստատած է հիւրընկալելու անձնակազմն ու ժողովականութեան ներկայացուցիչները: Այս տարի, երեկոյթին հրաւիրուած էին նաեւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հովուապետական այցելութեան առիթով կազմուած յանձնախումբերուն, ինչպէս նաեւ Ազգ. Առաջնորդարանի յարկին տակ գործող յանձնախումբերուն ու մարմիններուն անդամները:

Ընթրիքի սեղանի շուրջ կազմակերպուած երեկոն առաւելաբար ընկերային պահ մըն էր, քան թէ նախատեսուած յայտագիրով առաջնորդուող հանդիպում: Առաջնորդ Սրբազանին կողքին, ներկայ էին Հոգեւորականաց Դասու ներկայացուցիչներ, Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ եւ հովուապետական այցելութեան Գործադիր Մարմինի ատենապետ Տիար Խաժակ Տիքիճեան, Ազգ. Վարչութեան եւ յանձնախումբերու անդամներ:

Տիկնանց Օժանդակ Մարմինի ատենապետուհի Տիկին Սալբի Սրուբեան արտասանեց բացման հակիրճ խօսք մը, անդրադարձաւ հանդիպումի առիթին ու բարի տարի մը մաղթեց ներկաներուն:

Առաջնորդ Սրբազանը կատարեց սեղաններու օրհնութիւնը: Տիար Խ. Տիքիճեան ձայնակցեցաւ Առաջնորդ Սրբազանին՝ գնահատանք արձանագրելով Վեհափառ Հայրապետին այցելութիւնը յաջողութեամբ պսակելու մէջ բաժին ունեցող բոլոր անհատներուն ու յանձնախումբերուն, որոնք ցոյց տուին, որ Ազգ. Առաջնորդարանը իր կողքին ունի պատրաստակամ գործողներ:

Արժ. Տ. Վազգէն Քհնյ. Աթմաճեան կատարեց հանդիսավարութիւնը: Ան յաջորդաբար սրտի խօսք արտասանելու հրաւիրեց Ազգ. Վարչութեան ատենապետուհի Տիկին Ռիմա Պօղոսեանն ու յանձնախումբերու ներկայացուցիչները, որոնք ընդհանրապէս արտայայտուեցան հովուապետական այցելութեան առիթով ստեղծուած գործակցական մթնոլորտին, իրագործումներու ճամբով ձեռք բերուած փորձառութեանց ու հաստատուած բարեկամութեանց մասին, վեր առնելով Առաջնորդ Սրբազանին ու Ազգ. Առաջնորդարանին դերակատարութիւնը՝ մեր հաւաքական կեանքին մէջ: Յանկատրաստից յայտագիրը ունեցաւ նաեւ գեղարուեստական բաժին, որ ծաղկեցաւ երգերով, նուագով ու հաճելի պատումներով:

Սօտաւորապէս երեք ժամուան վրայ երկարող երեկոյթը իր աւարտին հասաւ Առաջնորդ Սրբազանին օրհնութեան ու գնահատանքի խօսքով: Ան բարձր գնահատեց Ազգ. Առաջնորդարանի գործին մասնակից եղող նուիրեալներն ու ծառայողները, բոլորին մաղթեց բարի տարի եւ յոյս յայտնեց, որ Ս. Ծննդեան խորհուրդը լիցքաւորէ բոլորիս կեանքերն ու աշխատանքի առօրեան: Ան նաեւ յուշանուէրներ յանձնեց ներկաներուն:

Մտերմիկ հանդիպումը վերջ գտաւ «Կիլիկիա»ի խմբերգումով:

## NEW YEAR AND CHRISTMAS RECEPTION HELD AT THE PRELACY



Near the end of each year, Clergy, Executive Council, members of Prelacy committees and staff join H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, for a New Year and Christmas reception hosted by the Prelacy Ladies Auxiliary at the "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall.

This year's reception took place on the evening of Tuesday, December 27<sup>th</sup>, and included members of Pontifical Visit committees. Central Executive Council member and Pontifical Visit Steering Committee Chair Mr. Khajag Dikijian was among the guests in attendance.

The dinner began with welcoming remarks by Ladies Auxiliary Chair Mrs. Salpi Srourian, who wished a happy New Year and a Merry Christmas to the guests.

The Prelate blessed the tables and conveyed his well wishes.

Mr. Dikijian thanked the members of the various Pontifical Visit committees for their time and contributions.

The evening's Master of Ceremonies, Rev. Fr. Vazken Atmajian, then subsequently invited Executive Council Chair Mrs. Rima Boghossian and members of various committees to convey their thoughts and well wishes, all of whom expressed praise for the leadership of the Prelate and Prelacy in our collective lives, and spoke highly of the friendship, collaboration, and unity which made the Pontifical Visit a success.

The dinner also included an impromptu cultural program of song and music.

In the closing message, the Prelate highly commended the service and commitment of the Prelacy's volunteer committee members, wished them a blessed New Year and for the spirit of Christmas to uplift and inspire them all. The guests were then presented with mementos.

The dinner came to a close with the benediction by the Prelate, and the singing of the Cilician anthem.

\*\*\*